

Թեան մէջ՝ մեր իշխանութեամբն ու զօրութեամբ, թէ՛ ցամաքի եւ թէ՛ ծովու վրայ, երբ յիշեալ պատճառին համար հոս գան ու մնան եւ ասկից իրենց երկիրը վերադառնան .

Ուստի . . . : Որոց 'ի հաւատս, եւն: Պիտի զօրէ գիրս մինչեւ մերձակայ Զատկի տօնը :

Վկայ է Արքայն, առ Ուեսմիկուսրի, 'ի 28 Հոկտեմբերի :

'ի ձեռն Հրահանագրի՝ Մասնաւոր Կնիով .



ԺԵ

ԼԵՈՆ Ի ԼՈՆԴՈՆ



Երջապէս Լեւոն 1385-ի վերջերն իր հետեւորդներով, ձիերով ու զինիի պաշարով Բուլոյն հասաւ եւ անկէ ալ Դովր :

Անգլիական եզերքին վրայ Լեւոնի կսպասէին արդէն՝ Հոբըարդ Բ-ի հօրեղբայրները՝ Նորքի ու Լանկաստրի դքսերը, որոնք եօթն օր հիւրընկալեցին ու պատուասիրեցին Հայոց Թագաւորը (1) :

Դովրէն ճամբայ ելաւ զէպի Լոնդոն :

Անմիջապէս Հոբըարդին հազորդուեցաւ Լեւոնի գէպի Լոնդոն յառաջանալը :

Անգլիայի Թագաւորը նկատելով որ իրեն համար « արտաքոյ կարգի պատիւ մըն էր ընդունիլ այսքան մեծ իշխան մը », եւ նկատելով որ այս փառքը չէ վայելած իր նախնիքներէն ո՛չ մէկը, — որովհետեւ գիտէր եւ իմացած էր Լեւոնի համբաւն ու քաջագործութիւնները, — որոշեց մեծա-

(1) Դիւլօրիե (Rec. Cr., եր. 728) իրաւունք ունի շիաւսալու Ֆրուասարի պատմածներուն այլ հետեւելու Սեն-Դընիի կրօնաւորին Ժամանակագիր-ին, որ այս մասին իմ ալ առաջնորդս եղած է :